ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Պ. Պռոշյան — «ՀՈՒՇԵՐ»: Տեքստը, ներածությունը և ծանոթագրությունները պատրաստեց Խորեն Սարգսյան. խմբագիր՝ Հովիկ Մելիքյան: Արմֆանի հրատարակություն, Երևան, 1940 թ.:

Հայ հասարակական մտքի և կուլտուրայի պատմության մեջ Պ. Պռոշյանը նշանավոր է ոչ միայն որպես խոշոր վիպասան՝ մի ամբողջ դարաշրջան կերտող իր վեպերով («Սոս և Վարդիթեր», «Կովածաղիկ», «Հացի խնդիր», «Ցեցեր», «Բղջե», «Հունոն»), այլև իբրև մանկավարժ և թատրոնական-հասարակական գործիչ: Նրա գրական-գպրոցական-թատրոնական գործունեությունն ընդգրկում է կես դար՝ սկսած անցյալ դարի 60-ական թվականներից մինչև իր մահը (1907 թ.): Սակայն հայ բուրժուական պատմագրությունն այդ նշանավոր դեմոկրատ վիպագրի և հասարակական գործչի դերը սահմանափակել է սոսկ ազգագրության շրջանակներում. նույն վերաբերմունքը, դժբախտաբար, ցուցաբերվել է նաև սովետական շրջանում՝ առանձին «գրականագետների» կողմից: Վերջին երկու-երեք տարում մեր սովետական գրականագիտությունը լուրջ քայլեր է անում վերարժեքավորելու Պ. Պռոշյանի գրական մեծակշիռ ժառանգությունն ու գործունեությունը, թեև այդ ուղղությամբ մինչև այժմ արված դեռևս անբավարար պետք է համարել:

Պ. Պռոշյանի գրական-հասարակական դեմքն իր ամբողջ մեծությամբ ցույց տալու և պատմականորեն արժեքավորելու համար շատ կարևոր է ունենալ նախ և առաջ մեծ վիպագրի երկերի ակադեմիական հրատարակությունն ու գիտական կենսագրությունը: Այդ մեծ գործի նախապատրաստական քայլերից է ընկ. Խորեն Սարգսյանի ներածությամբ և ծանոթագրություններով հրատարակված Պ. Պռոշյանի «Հուշեր»-ը:

Որևէ գրողի կամ գործչի մեմուարները կարևորագույն նշանակություն ունեն տվյալ դարաշրջանի հասարակական կյանքի և մտքի ուսումնասիրության համար: Պ. Պռոշյանի «Հուշեր»-ն առանձին հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև նրանք գերազանցապես վերաբերում են 60—70-ական թվականներին, երբ մեր գրական-հասարակական կյանքը զարգացման մի նոր և կարևոր փուլ էր մտել: Պ. Պռոշյանը, իբրև հիշյալ տասնամյակների ամենաականավոր գործիչներից մեկը, իր հուշերով հարուստ նյութ է մատակարարում այդ շրջանի պատմության համար:

Ինչպես հայտնի է, Պ. Պռոշյանն իր հուշերը հրատարակել է մի քանի անգամ՝ զանազան առիթներով, բայց, դժբախտաբար, դրանք մեծ մասամբ կրել են էպիզոդիկ—ֆրագմենտալ բնույթ՝ ցրված զանազան պարբերականներում. այսպես՝ «Գյուղական վարժապետներ» («Արձագանք», 1888 թ.),

«Խաչ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն և իմ «Սոս և Վարդիթերը» («Հանդես գրականական և պատմական», 1895 թ.), «Հայոց թատրոնի սկզբնավորությունը Թիֆլիսում» («Թատրոն», 1893 թ.), «Քսան և հինգ տարի առաջ և այսօր» («Տարազ», 1892 թ.), «Լուսանկարչի հիշատակարանից» («Տարազ», 1893 թ. և «Մասիս», նույն թվին), «Հուշիկներ»— առաջին շրջան, 1894 թ.։ Սրանցից ամենաընդարձակը վերջինն է, որ, սակայն, անավարտ է և հասցված է մինչև 1860 թիվը։

Ներկա հրատարակությունը, որ ընկ. Խ. Սարգսյանը պայմանականորեն բաժանել է «Ինքնակենսագրություն», «Օրագիր» և «Ներածություն» մասերի, ոչ այլ ինչ է, եթե ոչ «Հուշիկներ»-ի սևագիրն ու այն նյութերը, որոնց հիման վրա Պ. Պռոշյանը գրել է «Հուշիկներ» ա. շրջանը, սակայն մյուս շրջանները գրելու-շարադրելու հնարավորություն չի ունեցել։

Մեծ և շնորհակալ գործ է կատարել ընկ. Խ. Սարգսյանը՝ հրատարակելով «Հուշիկներ»-ի այս ձեռագրերը, բայց, մեր կարծիքով, Պ. Պռոշյանի մեմուարներն ավելի ամբողջական կլինեին, եթե հրատարակվեին «Հուշիկներ»-ի առաջին շրջանի և վերոհիշյալ ֆրագմենտների հետ։

Իր հուշերում Պ. Պռոշյանը հանդես է գալիս ոչ միայն որպես գրող, այլև իբրև դպրոցական և թատրոնական գործիչ։ Ուշագրավ է «Սիրագումար» աշակերտական ընկերությունը, ինչպես նաև Պռոշյանի գրական գործունեության սկիզբը, Խաչ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի զորեղ ազդեցությունը, որի արդյունքն է «Սոս և Վարդիթերը»։ «Հուշեր»-ում հարուստ նյութ կա Պ. Պռոշյանի թատրոնական գործունեության մասին. նրա գործակցումը Գ. Սունդուկյանին, Միք. Տեր-Գրիգորյանին, Գ. Զմշկյանին, և այլն։ Նշանակալից է առանձնապես, որ Պռոշյանը և իր գործակիցները թատրոնը կապում էին ժողովրդական մասսաների (համքյարների) հետ, նրանց մեջ շահագրգռություն և ջերմ վերաբերմունք առաջացնելով դեպի բեմական արվեստը։ Այնուհետև ուշագրավ է Պռոշյանի դպրոցական-մանկավարժական գործունեությունը, հատկապես Թիֆլիսում, Շուշում և Ագուլիսում անցյալ դարի 60-ական թվականներին առաջին անգամ երկսեռ դպրոցներ հիմնելու պատմությունը, այդ գործում Պռոշյանի պայքարը աղայության, հոգևորականության դեմ և սրանց հալածանքները։

Ինորոշ է նաև Պ. Պռոշյանի և լիբերալ մամուլի ներկայացուցիչների փոխհարաբերությունը, և այլն։

Այս բոլորը խիստ արժեքավոր են Պ. Պռոշյանի գրական-հասարակական դեմքը իր ամբողջ պայծառությամբ պատկերելու համար։

Ընկեր Խ. Սարգսյանը տեքստին կցել է ներածություն և բազմաթիվ ծանոթագրություններ՝ «Հուշեր»-ում հիշատակվող անձերի և անցքերի մասին։ Նա ամենայն մանրամասնություններով ընթերցողին ծանոթացնում է 60—90-ական թվականների նշանավոր և հաճախ երկրորդական գրական, հասարակական, դպրոցական և թատրոնական գործիչներին, և այդ տեսակետից ընկ. Խ. Սարգսյանի ծանոթագրությունները կարևոր տեղեկատու են հանդիսանում ոչ միայն Պռոշյանի կյանքն ու գործունեությունը, այլև հիշյալ տասնամյակների մեր գրական-հասարակական մտքի զարգացումն ուսումնասիրողների համար։

Եվ, ինչ խոսք, քանի որ մեր նույնիսկ ոչ-հեռավոր անցյալի ոչ միայն երկրորդական, այլև շատ նշանավոր գործիչների մասին քիչ բան է հայտնի, ընկեր Խ. Սարգսյանի տեղեկությունները շատ արժեքավոր են, թեև ոչ սպառիչ ու անթերի։

Երբեմն, ընկեր Խ. Սարգսյանը դուրս չգալով տրադիցիոն դրականագիտության և բանասիրության տերմինոլոգիայի շրջանակներից, այս կամ այն գրողին, գործչին, կամ պարբերականը որակում է շաբլոն ձևով, որ չի բացահայտում տվյալ գրողի կամ ժուռնալի հասարակական-պատմական դերն ու ուղղությունը։ Այսպես օրինակ՝ «Կռունկ»-ի խմբագիր Մարկոս Աղաբեկյանը որակվում է «ազգային-պահպանողական կուսակցության ներկայացուցիչ. «Մեղու Հայաստանի»-ն—«ազգային-պահպանողական թերթ»։ Պ. Շանշյանի մասին ասում է, որ նա «իր հասարակական հայացքներով պատկանում էր ազգային-պահպանողական խմբակցությանը»։ Ընթերցողը տարակուսում է, թե՝ ապա ի՞նչ տարբերություն կա 1848 թվին Պարիզում ռևոլուցիոն ակումբներին մասնակցած, համքյարների նկատմամբ մեծ համակրանք ունեցող, խոշոր մանկավարժ-վերանորոգիչ Շանշյանի և նույնպես «ազգային-պահպանողական» Հ. Կարենյանի, կամ Պ. Սիմոնյանի միջև։

Հարկավ, ծանոթագրության շրջանակները հնարավորություն չեն ընձեռում մանրամասն ընութագրություններ տալու, բայց և այնպես պետք է միանգամ ընդմիշտ հրաժարվել տրադիցիոն քննադատության քարացած պիտակավորումներից, և տալ, թեկուզ մի-երկու խոսքով, տվյալ գրողի կամ գործչի պատմական-հասարակական դերի ճշտորեն սահմանված գնահատականը։

Ի՞նչ է ասում, օրինակ՝ «ազգային-պահպանողական» յուլիկը։

Չէ՞ որ Պ. Պռոշյանն էլ նույն տրադիցիոն քննադատության կողմից որակվել է որպես ազգային-պահպանողական վիպագիր, և այդ կրկնվել է նույնիսկ մինչև վերջին տարիներս։ Չէ՞ որ «ազգային-պահպանողական» Պռոշյանն էր հայ աշխատավոր գյուղացիության ցեցերի՝ ցարական պաշտոնյաների, կուլակների և էջմիածնի ձրիակեր վարդապետների մերկացնողը. նա էր, որ նախ Թիֆլիսում, ապա Շուշում և Ադուլիսում, խիզախել է բաց անել իգական դպրոցներ, համարձակորեն պայքարելով կրթության և դաստիարակության միջնադարյան կղերական գոսացած նորմերի դեմ՝ իր վրա հրավիրելով էջմիածնականների և ազգության զայրույթը՝ «լյութերական, անաստված, անբարոյական» հռչակվելով նրանցից և հալածվելով։

Պ. Պռոշյանի մեմուարներում որոշակի երևան է գալիս նրա առաջադիմականությունը, նրա դեմոկրատիզմը, նրա համակրանքը Նալբանդյանի, Սունդուկյանի, Շանշյանի նկատմամբ և բացահայտ հակակրությունը դեպի Գլ. Արծրունին, Արգ. Հովհաննիսյանը և հայկական լիբերալիզմի մյուս ներկայացուցիչները։ Ի՞նչ խոսք, որ Պռոշյանը Նալբանդյանի տիպի դեմոկրատ չէր. այս մասին խոսք չի կարող լինել։ Բայց նա դեմոկրատ էր. հիշենք Միք. Նալբանդյանի և Ղ. Աղայանի ջերմ ու բարձր գնահատականները Պերճ Պռոշյանի մասին։

Պետրոս Շանշյանին, Մարկոս Աղաբեկյանին և Պռոշյանի մյուս զոր-

ծակիցներին «ազգային-պահպանողական» ածականով որակելով մենք դժվարացնում ենք Պ. Պռոշյանի և նրա շրջանի մասին հստակ պատկերացում ունենալու գործը, ավելի ճիշտ՝ շփոթություն ենք ստեղծում, ընթերցողի մեջ տարակուսանք առաջացնելով, թե՝ բայց չէ՞ որ «ազգային-պահպանողական» «Կռունկ»-ի, «Մեղու Հայաստանի»-ի, «Նոր-Դար»-ի շուրջն էին համախմբված մեր դեմոկրատ գրողները՝ Պռոշյանից սկսած մինչև Մուրացանն ու գյուղագիրները...

Ընկեր Խ. Սարգսյանի՝ «Հուշեր»-ին կցված «Ներածությունը», որ թվում է, պիտի օգներ ընթերցողին կողմնորոշվելու, գնահատական խոսք ասեր հուշերում հանդես եկող դեպքերի և դեմքերի ու սրանց նկատմամբ Պռոշյանի այս կամ այն վերաբերմունքի մասին,— սոսկ տեխնիկական-տեքստաբանական մի առաջաբան է և ոչ ներածություն։

Ինստիտուտն իր կողմից բավականացել է միայն նշելով, որ՝ «Պռոշյանը միշտ չի կարողանում ճիշտ ըմբռնել հասարակական երևույթների ներքին էությունը և այդ իսկ պատճառով հաճախ սայթաքում է իր գնահատականների մեջ»։ Պռոշյանը մեղադրվում է, որ նա «թերագնահատել է» Նազարյանին, կամ՝ «հաճախ կենցաղային համեմատաբար մանր փաստերից մեծ և սխալ եզրակացություններ է անում» (Գր. Արծրունու և Շիրվանզադեի նկատմամբ)։

Առաջաբանի հեղինակները մոռանում են, որ Պռոշյանը, օբեկտիվ և անաչառ վերաբերմունք ցույց տալու համար, հիշյալ գրական-հասարակական գործիչներից պետք է զանվեր պատմական-ժամանակագրական պատշաճ հեռավորության վրա, այնինչ նա ժամանակակից էր Նազարյանին և Արծրունուն։ Պ. Պռոշյանի վերաբերմունքը վերջինների նկատմամբ առաջաբանի հեղինակները պետք է բացատրեին նրանց և Պռոշյանի միջև եղած սոցիալական-գաղափարական հակամարտությամբ և ոչ թե պատահական «սայթաքում»-ով։ Ինչպես հայտնի է, համանման վերաբերմունք ցույց է տվել Ղ. Աղայանը Նազարյանի և Ռ. Պատկանյանի նկատմամբ. արդյո՞ք այդ «սայթաքում» է, կամ ապացույց, թե Աղայանը ժխտում էր կամ թերագնահատում Նազարյանի և Պատկանյանի պատմական դերը մեր գրականության և հասարակական մտքի զարգացման գործում։ Բնավ ոչ։

Պռոշյանի, Աղայանի կամ մեկ ուրիշի համակրանքներն ու հակակրանքներն այս կամ այն գործչի նկատմամբ ունեն ավելի խոր պատճառներ, քան առաջին պահ թվում է։ Այդ վերաբերմունքի պատճառը պետք է որոնել հասարակական այն հոսանքների պայքարի մեջ, որոնց ներկայացուցիչները հանդիսանում էին մի կողմից Արծրունին և մյուս կողմից՝ Պռոշյանը։ Հասկանալի է, որ գաղափարական պայքարի տարբեր դիրքերում գտնվելով՝ թե մեկը և թե մյուսը չէին կարող պատմական օբեկտիվ, անկիրք ու անաչառ վերաբերմունք ցուցաբերել միմյանց նկատմամբ։

Եթե ոչ Ինստիտուտի կողմից գրված առաջաբանում, ապա ընկ. Խ. Սարգսյանի Ներածության մեջ պետք է որ այդ հարցերը լուսաբանվեին, և ընդհանրապես Պ. Պռոշյանի՝ փաստերով այնքան հարուստ՝ «Հուշեր»-ից համապատասխան ընդհանրացումներ արվեին՝ խոշոր դեմոկրատ վիպագրի

և դպրոցական-թատրոնական գործչի կերպարն ավելի ամբողջացնելու, նրա կատարած դերն ավելի պարզորոշելու համար։

Տեքստոլոգիական մի այսպիսի աշխատանքի համար, ինչպիսին Գ. Գուշյանի «Հուշեր»-ի ներկա հրատարակությունն է, թերևս ավելորդ համարվեին այդ կարգի բացատրությունները, եթե Գ. Գուշյանի և շատերի մասին մեզանում լիներ անաչառ պատկերացում և հարուստ գրականություն։ Եվ, քանի որ, դժբախտաբար, մեզանում նոր է սկսվում մեր գրականության դիտական-մարքսիստական վերագնահատումը, ապա ամեն մի պատմական դոկումենտ հրապարակվելիս, ինչքան էլ այն կրի գիտական-տեքստոլոգիական բնույթ, պետք է ունենա արժեքավորող, լայնորեն մեկնաբանող ներածական, առանց որի շատ կողմերով պակասավոր կլինի հրատարակությունը։

Այսուհանդերձ, ընկեր Ե. Սարգսյանը շնորհակալ և կարևոր գործ է կատարել՝ հրատարակելով Գ. Գուշյանի «Հուշեր»-ը, որ մի արժեքավոր մուծում է ոչ միայն գուշյանագիտության, այլև XIX դարի մեր հասարակական մտքի և գրականության զարգացման պատմության մեջ։

Ա. ԻՆՃԻԿՅԱՆ